

10-րդ դարի ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՎՆՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ե. Ո. ՂՈՒԿԱՍՅԱՆ

10-րդ դարի պատմագրությունն առանձնանում է ոչ միայն լեզվի բառային կազմի ու քերականության, այլև հնչյունական համակարգի զգալի փոփոխություններով:

Այդ փոփոխություններն իրենց բնույթով տարբեր են:

1. Դրանց մի մասն ընդհանրական բնույթ ունի. հատուկ է լեզվի տարածական բոլոր տարբերակներին, ինչպես՝ գրաբարյան ետաբարբառների և երկբարբառների աստիճանական մեմբարբառացումը, փակ վանկում աւ երկբարբառի վերածումը **օ** հնչյունի, կատկային կոշտ լ(ղ)-ի անցումը ետնալեզվային **ղ** հնչյունի:

2. Փոփոխությունների մի մասը կատարվել է այս կամ այն աշխարհագրական վայրում, հատուկ է միայն որևէ բարբառի կամ բարբառախմբի՝

Մեծրոպ վայրցձորցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Անանուցի և Ուխտանեսի երկերը բազմաթիվ փաստեր են տալիս հնչյունական համակարգում տեղի ունենցած տեղաշարժերի մասին: Նրանց ստեղծագործություններում ակայանում են ոչ միայն գրաբարի հնչյունական համակարգի զարգացման արդյունքում կատարված որոշ ընդհանրական փոփոխությունների վերաբերյալ փաստեր, այլև առանձախատկություններ, որոնք հատուկ են միայն հեղինակներից որևէ մեկին՝ կախված թերևս այն հանգամանքից, թե ինչ բարբառախոս միջավայրում է ապրել ու ստեղծագործել հեղինակը:

Մատենագրական տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ աւ երկբարբառն արդեն 10-րդ դարում փակ վանկում դարձել էր **օ**: Այդ մասին է վկայում այն փաստը, որ երբեմն միևնույն բառում աւ երկբարբառը և **օ(օ)** պարզ հնչյունը փոխարինում են միմյանց: Այսպես՝ Ուխտանեսի պատմության 2-րդ հատվածում կարդում ենք. «Եւ վարդապետութեանդ ձերում հոգալով զաշխարհս մեր՝ յիշեցուցանելով սուրբ և զուղիղ հաւատն՝ զոր մեծին Գրիգորի սահմանեալ էր յայս Կաւկասային կողմանս» (էջ 33), իսկ առաջին հատվածում գտնում ենք **Կովկաս** տարբերակը. «Ջայրացեալ Արտավազդայ՝ հրամայէ զօրս ժողովել Յատրպատականէ՝ և զբնակիչս լերինն Կովկասու» (էջ 44): Սա, կարծում ենք, խոսում է այն մասին, որ **Կաւկաս** և **Կովկաս** ձևերը նույն արտասանությունն ունենին: Թովմա Արծրունին ունի **Տարան/Տարոն**, աւճիր/ուճիր, Մեծրոպ երեցը՝ Մեծրապ/Մեծրոպ զուգածները:

Եթե փակ վանկում աւ**օ** հնչյունափոխությունը համընդհանուր իրողություն է, ապա աւ**ու**ն փոփոխությունը սահմանափակ բնույթ ունի: Աւ**ու**ն հնչյունափոխության վերաբերյալ փաստեր ենք գտնում Անանուցի և Արծրունու պատմություններում: Գրաբարյան դօղեալ և յօճք ձևերի փոխարեն Անանուցը գրում է **դօղեալ**, յուճք տարբերակները. «Ջոր օրինակ և երկուց փիշապաց կամ կորեանց առիծուց, մինն դուղեալ՝ միւսն բարձրագոյնս խրոխտայցէ» (էջ 430): «Մրազարդ կամարձև կցուածք յունիցն, և քիքք և արտևանունք հանդերձ պտղովք վկայեալք» (էջ 470): Արծրունին շաւառ բառը գրում է շուառն ձևով՝ «Որ տեղացսն ի վերայ ձերնեսս երկաթեղէնս և շուառունս մոխս պաղաւատիկք սլաքովք» (էջ 138): Չնայած, ըստ Հ. Մուրադյանի, աւ**ու**ն հնչյունափոխության փաստերը (հնագույն վկայությունը 10-րդ դարից է) մեծ մասամբ արձանագրվել են Արևելյան Հայաստանում ստեղծված սկզբնաղբյուրներում,

¹ 10-րդ դարի համար «բարբառ» տերմինը գործածելով հանդերձ՝ այն չենք նույնացնում արդի «բարբառ» հասկացության հետ, քանի որ մինչև 10-րդ դարը հայերենը համեմատաբար միասնական էր և բարբառային ուժեղ տարբերակվածությամբ աչքի չէր ընկնում. «Արդի բարբառների գերակշիռ մասը գերազանցապես ձևավորվել է միջինհայերենյան շրջանում» («Հայերենի բարբառագիտական ատլաս», Բ. II, Եր., 1985, էջ 100):

բայց նշված տարածքի՝ մեր կողմից ուսումնասիրվող հեղինակներից ոչ մեկի երկում այդ հըն-
չյունափոխության վերաբերյալ փաստեր չենք գտնում: Մուրադյանը կարծում է, որ աւ>ու հըն-
չյունափոխությունը հաջորդել է աւ>օ փոփոխությանը. «Եթե փաստերի լույսի տակ գնահատե-
լու լինենք մատենագրության մեջ հանդիպող աւ>ու հնչյունափոխության օրինակները, ապա
այստեղ էլ պետք է ընդունենք, որ այդ ու-ն կարող էր առաջանալ միայն աւ>օ փոփոխությու-
նից հետո: Դա նշանակում է, որ պետք է ընդունել նաև այդ հնչյունափոխության աւ>օ>ու հա-
ջորդականությունը»²:

10-րդ դարի մատենագրությունը քիչ փաստեր է տալիս եւս երկբարբառի պատմական
գարգացման վերաբերյալ: Դեռևս դասական գրաբարում եւս երկբարբառը շեշտը կորցնելիս
վերածվում էր ե պարզ հնչյունի: Հետագայում եւս>ե փոփոխությունը կատարվում է նաև բա-
ռերի ուղիղ ձևերում, ինչպես՝ «Ետ զահեկ (փոխ՝ ահեակ) ձեռն սրբոյն Անդրէի Առաքելոյն»
(Ուխտ., Ա-108), «Եւ որք բազմակեցք և որք միայնակեացք...» (Ուխտ., Ա-14): Իսկ Դրասխա-
նակներոցին քղեաշխ բառին գուգահեռ բազմիցս գործածում է հնչյունափոխված քղեշխ տար-
բերակը. «Վասն զի Մարիխար քղեշխ Աղձենաց և Շամշարան նահապետն Ապահունեաց
և Անան՝ հաւատարիմք արքային Աբգարու, ելեալք յերուսաղէմ» (էջ 36):

Այ երկբարբառը երկու տիպի փոփոխություն է կրել՝ այ>ա և այ>է: Այ>ա հնչյունափո-
խության եզակի փաստ ենք գտնում Դրասխանակերտցու երկում, որտեղ գուգահեռաբար
գործածված են անգայռագեղ/անգառագեղ տարբերակները. «Արիւմըռուշտ և անգառագեղ
գագանացն մի եղիցի վարատեալ օձտել զգաստութիւն հօտի Տեառն» (էջ 344), «Իբրև զան-
գայռագեղ գագան վայրագութեամբ մոմեալ ընդդէմ Սմբատայ» (էջ 188): Այ>է հնչյունափո-
խության ենք հանդիպում Թովմա Արծրունու պատմության մեջ՝ ճայթել > ճեթել, ինչպես՝ «Ե-
թէ Տէր կամեսցի՝ վաղի պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև
զամպս երկնից» (էջ 140): Դրասխանակերտցին նույնպես ունի այ>է հնչյունափոխության օրի-
նակներ: Նա չորս անգամ գործածել է անհնչյունափոխ քարածայռ, նույնքան էլ՝ հնչյունա-
փոխված քարածեռ ձևերը, ինչպես՝ «Յամուրս քարածայռ ձորոյն խորոփեաց Տայոց անկա-
նէր» (էջ 178), «Չոգայ կացի ընդ քարածեռ վիմին» (էջ 287):

Գրաբարյան ոչ երկբարբառի դիմաց ու պարզ հնչյուն է առկա Դրասխանակերտցու
պատմության մեջ հանդիպող երկու բառերում՝ գոյժ//գուժ, գոռոթ//գոռոթ: Օրինակ՝ «Գուժ աղմը-
կի աղաղակին ընդ ոլորտս տերութեանն արքայի սիռեթ» (էջ 207), «Գռոթ սպայից յինքեանս
կուտեալ Սմբատ և Աբաս» (էջ 145): Գրաբարում իւ և եւ երկբարբառներ բառիմաստային
տարբերակում չունենի և կարող էին ազատ փոխարինել միմյանց: Երկիր/ երկեղ, գիր/
գեղ, աղբիր/ աղբեր և բազմաթիվ այլ գուգագրություններ ունեն բոլոր պատմիչները:

Իւ>ի հնչյունափոխություն վկայված է Հովհ. Դրասխանակերտցու երկում: Պատմիչը
գուգահեռաբար գործածում է կիրակէ և կիրակէ տարբերակները. «Ի վաղի առաւօտու կիր-
ակէին չուեալ գնայ» (էջ 106), «Որ ի կիրակէն լուսանայր» (էջ 106): *կիրակէ* ձևը ավանդված է
դեռևս 5-րդ դարից, թեև հանդիպում է միայն Բուզանդի մոտ: 10-րդ դարի պատմագրության
մեջ եւ>ե հնչյունափոխության դեպքերը բազմաթիվ են: Ուխտանեսն ունի երկիր/երկեղ/եր-
կեղ, գիր/ գեղ/ գեղ, Մենուպը՝ գիր/գեղ, Դրասխանակերտցին՝ աղբիրիկ/աղբերիկ, գիր/
գեղ/գեղ, Արծրունի՝ աղբիր/աղբեր գուգաձևերը:

Տարբեր փոփոխություններով են ներկայանում նաև պարզ ձայնավորները: Արդեն հըն-
չյունափոխված ենք գտնում նախկինում չհնչյունափոխվող ա և ո հնչյունները, ինչպես՝ «Մինչ-
դեռ այսպէս յընդորութեան կեանս յապահովանայր երկիրս Հայոց» (Արծր., 92): «Չի տեսանեմ
զքեզ այր պոտտաբան» (էջ 138): «Ինքեանք պատրաստեալ են գնոյն փարշմանն կրել զոր
դաշտայինքն կրեցին» (Արծր., 190): «Արդ ոչ կարենք փոյթ ընդ փոյթ շղոմարար հաճութեամբ
թագաւորիդ յանձն առնուլ» (Արծր., 132): Ծղոմարար և պոտտաբան բառերում առկա են ո>ը,
փարշման և ընդորութիւն բառերում՝ ա>ը փոփոխությունները: Ուխտանեսը նույնպես տալիս
է ա>ը հնչյունափոխության փաստ. թովանդակ բառը գրում է բուանդակ//բովանդակ//բաւըն-
դակ տարբերակներով: Վերջին տարբերակը կարող է լինել սխալ գրչության արդյունք, մանա-
վանդ որ այն գործածվել է միայն մեկ անգամ, իսկ եթե սա վրիպակ չէ, ապա թերևս հատուկ է
եղել Սեբաստիայի խոսակցական լեզվին:

² Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Բ. 1, Եր., 1982, էջ 176:

10-րդ դարի պատմագրության մեջ հանդիպում են ոչու հնչյունափոխության բազմաթիվ դեպքեր, ինչպես՝ Թումաս//Փումաս (Ուխտ.), կաթողիկոս/կաթուղիկոս (Մեսրոպ երեց), Կոմիտաս//Կումիտաս, կաթողիկե//կաթուղիկե (Դրասխ.), գումբեթն (Անանուն), Խուրեհ, Տարուն, շղումարար, Մուրիկ, ուրջանալ (Արծր.): Այսպես՝ «Բունեալ ուրջացեալ էր ի նմա սատանայ զօրօք իրովք» (Արծր., 248): «Բայց ի գնայն Խուրեհայ առ Տիբեր կայսր...» (Արծր., 80): «Ունի և գումբեթս երկնահարթս ոսկեզարդս և լուսաճանաչս» (Անան., 458): Հ. Մուրադյանը ոչու հնչյունափոխության ամենահին վկայությունները բերում է 11-րդ դարից՝ Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ արդեն 10-րդ դարում ոչու անցումն ընդգրկում էր տարածքային մի քանի ճյուղավորում:

Ըստ Մուրադյանի՝ համարյա նույն տարածքներում, որտեղ ո-ն փոխվում էր ու-ի, ե-ի դիմաց առաջանում է թ՝: Սակայն, ուսումնասիրվող երկերում ե>ի հնչյունափոխության վերաբերյալ փաստերը հազվադեպ են. ինչպես՝ «Շուրջ ձեզալ զգառագիղճ՝ ի մէջ փակել զկորովին և զքջա արանցն գիշխանն Աշոտ» (Արծր., 202): «Արձանացեալ դադարէր ի միջերկրեայս, ընդ զգուշացեալ յանգայրագիղ զազանէն» (Դրասխ., 270): «Եւ ունին կղզիս Սառոցհայ, զԿրիտէ և զԿիպրոս» (Ուխտ., 22):

Միջին հայերենում, երբ է հնչյունին հաջորդում էր ղ հնչյունը, ե-ն որոշ բառերում դառնում էր ա: Այս հնչյունափոխությունը հատուկ չէր գրաբարին: Դրասխանակերտցու պատմության մեջ հանդիպող յաղակարծ (փոխանակ՝ յեղակարծ) բառը («Յաղակարծս դիմեալ չունեալ գիշերի հասանէին ի վերայ իշխանին» (էջ 190)) արդյո՞ք այս հնչյունափոխության մի վկայությունն է: Դժվարանում ենք պնդել, քանի որ փաստը եզակի է, ուստի կարող է նաև վրիպակ լինել:

Ժամանակակից բարբառներում տարածված երևույթ է բառակզբի ձայնավորների անկումը կամ սղումը: Այս երևույթի առաջին վկայությունները բերվում են միջինհայերենյան շրջանի գրավոր աղբյուրներից: Սակայն ավելի հին վկայություններն առկա են Ուխտանեսի և Արծրունու երկերում, այսպես՝ «Հանդերձէր պատրաստէր մեծ Արք Եպիսկոպոսն Գրիգոր և զնորին որդի զԻստակէս Եպիսկոպոսն» (Ուխտ., 106): Արծրունին ունի Եռագմայուզան//Իազմայուզան տարբերակները (Արծր., 142): Առաջին բառում ընկել է բառակզբի ա ձայնավորը, երկրորդում՝ ե:

Ի ձայնավորի հնչյունափոխության ավանդական ձևերին զուգահեռ Դրասխանակերտցին տալիս է ի հնչյունի փոփոխության նոր փաստ: Միջ ձևի հետ միասին մի քանի անգամ գործածել է ճուշ տարբերակը: Այսպես՝ «Փարիսական յորդորն և Հրէիցն ճուշն է, որով և յԱստուածն բան համարձակեալ՝ կորեան յալիտեանս յալիտեանից» (Դրասխ., 155): «Պահապանացն սաստիկ աղաղակն և ճուշն դատափետ միշտ ոչ հեռացեալ հասանէր ի լսելեաց իմոց» (Դրասխ., 215): Ի>ու հնչյունափոխության այլ վկայություններ ոչ Դրասխանակերտցին, ոչ էլ մյուս պատմիչները չունեն:

10-րդ դարում որոշ օրինակափոխություններ հավանաբար դեռ հստակ ձևավորված չէին, քանի որ բազմաթիվ բառեր մատենագրության մեջ միաժամանակ հանդիպում են և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ տարբերակներով, այսպես՝ երկիրպագանել/երկրպագանել, կարծիք//կարծք, քարածայր//քարածեռ, աղբիք//աղբեք, ճուղաբարոյ//ճիւղաբարոյ (Դրասխ.), գեաղջ//գեղջ, Ողիմպիաղա//Ողըմպիաթայ, Խուրեհ//խուրեհ//խուրան, Բարգեան//Բարգէն, Տիպոն//Տսպոն (Արծր.), հուղ//հիւղ (Անան.), վրթանէսի//վրթանիսի, երկիւղ/երկեղ, միտոն/մետոն (Ուխտ.), գոյթ//գոթ (Մեսր.):

Բազմաթիվ փոփոխություններով է ներկայանում նաև լեզվի բաղաձայնական համակարգը:

Ինչպես հայտնի է, հին հայերենում ղ հնչյունը հանդես էր գալիս որպես լ ձայնորդի արտասանական տարբերակ: Հետագա զարգացման ընթացքում դասական հայերենի ղ-ն աստիճանաբար ձեռք է բերում նոր որակ՝ կատկային կոշտ լ(ղ)-ից վերածվում է ետնայեզվային ղ հնչյունի: Սակայն 10-րդ դարում ետնայեզվային ղ-ն հավանաբար դեռ հստակ ձևավորված չէր: Ասվածի մասին է վկայում այդ դարի մատենագրության մեջ արձանագրված ղ հնչյունի

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 115:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս «Այնպիսիք միջին գրական հայերենի պատմություն», Եր., 1972, էջ 75:

լծորդական երկվությունը. մի կողմից՝ այն լծորդվում է լ-ի, մյուս կողմից՝ խ-ի հետ: Այսպես՝ ունենք պաղատ (Ուխտ.), Աղանք (Անան.), Ատղաս, Պահղաիկ, պաղատ, Անատողի, Ղևոն, Հայրակղես, դախղիճ (Արծր.), կղիմա, մառախլապատ//մառախղապատ, քիլ//քիղ (Դրասխ.) ձևերը: Բայց սրանց կողքին գտնում ենք նաև անղալ (Ուխտ.), վաղճան (Մեար.), Կոխպն//Կողքն, Բուղայ//Բուխայ//Բուհայ (Արծր.), դրծողութիւն//դրծոխություն, սղալանք, Բուխայ, ոխորտ// ողորտ (Դրասխ.) տարբերակները: Այս փոփոխությունն ընդհանրական բնույթ ունի և սահմանափակություն չի ճանաչում: Սրա առաջին վկայությունները գտնում ենք 9-րդ դարում (Կաղանկատվացի), իսկ 11-րդ դարում այս գործընթացն իր ավարտին է հասնում⁶:

Մատենագրության մեջ արձանագրվել են նաև ն>մ փոփոխության օրինակներ: Ամբիճ/անքիճ (Ուխտ, Արծր., Դրասխ.), ամպարիշտ (Մեար.), անքոկ//ամբոկ (Դրասխ.) տարբերակները, թերևս երկշրթնային բ(պ)-ի մոտ առաջնայեզվային ճ հնչյունի առմամտության արդյունք են:

Թովմա Արծրունու և Անանունի երկերում վկայված է հնչյունական մեկ այլ հետաքրքիր երևույթ՝ հ>խ անցումը: Հ>խ հնչյունափոխությունը վանի բարբառի բնորոշ առանձնահատկություններից է: Անդրադառնալով վանի բարբառում հ>խ հնչյունափոխությանը՝ Աճառյանը գրում է. «վանի բարբառի հ>խ ձայնափոխությունը իրոք հին է և տեղի է ունեցած արաբների արշավանքից հետո և թուրքերի տիրապետությունից (ԺԱ դար) ավելի առաջ»⁷: Ա. խաչատրյանը «Հնչյունաբանության ուսումնասիրության սկզբունքները հայ բարբառագիտական աշխատություններում» հողվածում Աճառյանի վերոհիշյալ դիտողության մասին գրում է. «Ավելի ստույգ կլիներ ասել, թե հ>խ հնչյունափոխությունը դադարել է գործելուց նշված ժամանակահատվածում, բայց թե երբ է այն սկսել գործել, այդ մասին հնարավոր չէ արաբական փոխառությունների վրա հիմնվելով որևէ հաստատ բան ասել (հնչյունական օրենքները ժամանակային խիստ սահմանափակվածություն չունեն)»⁸: Լ. Մուրադյանը կարծում է, որ այս երևույթը կյանքի է կոչվել դեռևս նախագրային շրջանում և ավարտվել է արաբական տիրապետությունից առաջ⁹:

Երբ էլ սկսված լինի հ>խ հնչյունափոխությունը, 10-րդ դարում այն արդեն վերջնականորեն ձևավորված օրինաչափություն էր և ընդգրկում էր հինհայերենյան շրջանից հ-ով ավանդված բոլոր բառերը:

Արծրունու մոտ հ-ի փոխարեն խ ենք գտնում հետևյալ բառերում՝ ճախ, թանճրախոճ, կոխակ, թոխ ու բոխ, անխեղեղ, վախրիճ, խոխակապ, դախղիճ, ժախախոտ, ժախ, ճախուկ, խրախատ, գոխ, Կախայ, կոխակ, շախստան, խոկ: Այսպես՝ «Իսկ Տաճատ և վախրիճ ի մէջ փակեալ Ջմարգպանն և գորդի նորա զԾիրոյ՝ ձերբակալ արարեալ ածեն ի Դոսին» (էջ 126): «Ջի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մախածն հնագանդութեանն» (էջ 204), «Եւ բնակէ յամրոցին, որ այժմ Ջոայլ վանն անխեղեղ ամրութեանն զեղջկաբանեն» (էջ 122) և այլն: Անանունի լեզվում հնչյունափոխությունն առկա է խեր, ժախուկ, խերական, խրոսակ, խող բառերում, ինչպես՝ «Տալով մմա գբերդն ազարակայ և զգաւառն ժախուկ, և զօրագլուխ գնա ի Պարսիցն կացուցանէ մարծի» (էջ 408): «Ջեռն տուեալ յայր մի... ի թեր քաղաքէ» (էջ 408): «Եկն էջ ի թերականն կոչեցեալ դաշտ» (էջ 410):

Բայց բառերի մեծ մասում հ>խ փոփոխությունը բացակայում է, որը թերևս արդյունք է գրական լեզվի ուղղագրությունը պահպանելու ձգտման:

Բարբառների մեկ ուրիշ խմբում (Ագուլիս, Կարճևան) հ-ն է հանդես գալիս խ-ի փոխարեն: Բոլոր այն դեպքերում, երբ խ>հ անցումը չի կարող բացատրվել տարմամտության օրենքով, Մուրադյանը կարծիք է հայտնում, թե այդտեղ առկա է հ:խ հակադրությունը: Նա ենթադրում է, որ հնագույն շրջանում խ-ն լծորդվում էր հ-ի հետ¹⁰:

Վանի բարբառին հնչյունաբանական այս երևույթը հատուկ չէ: Ուսումնասիրողներից ոչ մեկը չի նշում այդ բարբառում խ>հ փոփոխության փաստեր: Գ. Զահուկյանը նույնպես «Հայ բարբառագիտության ներածության» մեջ նշում է այդ երևույթի բացակայության փաստը վանում և հարակից շրջաններում:

⁶ Տե՛ս Լ. Աճառյան, Երբ ի դարձավ դ. «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր», 1948, V, էջ 40:
⁷ Լ. Աճառյան, Բնություն վանի բարբառի, Եր., 1952, էջ 67:
⁸ «Հայերենի բարբառագիտական առյուծ», հ. II, էջ 131:
⁹ Տե՛ս Լ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 251:
¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 251:

Այնուամենայնիվ, Թովմա Արծրունու երկուս մի քանի բառերում խ-ի փոխարեն գտնում ենք Ռ հնչյունը, ինչպես՝ յաճուճաբար, հյրդեմի, Բուհայ, Ափհազք, հազմարար: Այսպես օրինակ՝ «Առ ոչինչ համարեալ է յաճուճաբար գործսն գոր գործեսց» (էջ 68): «Դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի Սկիհազաց աշխարհէն» (էջ 310): «Որ ինչ զկնի այսորիկ գործեսց Բուհայ ի Դուին քաղաքի» (էջ 260):

Այս փաստի վերաբերյալ կարող ենք ենթադրել, որ՝

1. Վանի բարբառին հատուկ է եղել նշված հնչյունափոխությունը, բայց վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից:

2. Սա ձեռագիրն ընդօրինակողի բարբառային արտասանության ազդեցության արդյունք է:

3. Սրանք կարող են վրիպակներ լինել:

Այն հանգամանքը, որ այս երևույթը բացակայում է Անանուցի լեզվում (իսկ նա Արծրունու հայրենակիցն է, և եթե սա Վանի բարբառին հատուկ երևույթ է, ապա պետք է արտացոլվեր նաև նրա լեզվում) և հետագայում էլ չի արտահայտվել այդ բարբառով խոսող բնակչության լեզվում, ծիստում է առաջին ենթադրությունը: Չենք կարծում նաև, որ սրանք վրիպակներ լինեն: Սա հավանաբար հետագայում ձեռագիրն ընդօրինակող գրչի բարբառին հատուկ օրինաչափության ներթափանցման արդյունք է:

Որոշ փոփոխություններով են ներկայանում նաև գրաբարի մյուս բաղաձայնները: Ուսումնասիրվող երկերում բազմիցս գտնում ենք ձայնեղների դիմաց խուլ, խուլերի դիմաց՝ ձայնեղ հնչյուններ, ինչպես՝ խոշտանկել, վերընծիղել, վտանկ, փափաքել, ամպարիշտ, հաջոյ, թագուստ, ցանգ, Վաջագան և այլն, որոնցից շատերը ներկայացնում են տարբեր բարբառային օրինաչափություններ: Հեղինակները, թեև մեծ մասամբ պահպանում են գրաբարյան (մետրոպայան) ուղղագրությունը, սակայն երբեմն նրանց արտասանական օրինաչափությունները ներթափանցում են գրավոր խոսք, և արդյունքում ստեղծագործության լեզվում տեղ են գտնում որոշ շեղումներ դասական ուղղագրությունից: Այսպես՝ Արծրունուց գրում է Ողբմայիթայ, Տիպաոն, Ջուպետայ, ընտիքտիոնք, Սետա, վտանկ և այլն: Այս բառերում ձայնեղ հնչյունների դիմաց առկա են խուլեր, որ տիպական է Վանի բարբառի համար: Սակայն որոշ բառերում էլ խուլերի փոխարեն ունենք ձայնեղ հնչյուններ՝ Ժանդանալ, բանդ, Աղբագ և այլն: Ինչպես հայտնի է, Վանի բարբառն ունի երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ և ձայնեղները պահպանում է ռնգային Ը, մ հնչյուններից հետո միայն: Այդտեղ գրաբարյան խուլ հնչյունները չէին կարող ձայնեղանալ: Ուրեմն ի՞նչ կարող է նշանակել այս երկրորդ փոփոխությունը: Կարծում ենք, որ այստեղ ոչ թե խուլ հնչյունները ձայնեղացել են, այլ դ, գ տառերով արտահայտվել են տ և կ հնչյունները:

Ուխտանեսը հաճախ խուլ հնչյունների փոխարեն գրում է ձայնեղ հնչյուններ, ինչպես՝ Կազբից, Աշդահակ, ցանգ, Վաջագան, մրջոտել և այլն: Ինչպես գիտենք, Սեբաստիայի բարբառն ունի երկաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգ, և վերոհիշյալ բառերում խուլերի դիմաց ձայնեղ հնչյունների առկայությունը, թերևս, տեղային արտասանության ազդեցության արդյունք է:

Հնչյունական որոշ փոփոխություններ փոխազդեցական հնչյունափոխության արդյունք են, ինչպես՝ ամբ, ծնգեալ, փափաքելի (Դրասխ.), ճիճ (Մեար.): Բայց հնչյունական շեղումները ոչ միշտ են վկայում համապատասխան տեղային արտասանության օրինաչափության մասին:՝ Որոշ շեղումներ կարող են լինել պարզապես այլ հեղինակներից ընդօրինակած գրելաձև: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ տվյալ հեղինակի լեզվում նկատվում են հնչյունական այնպիսի շեղումներ, որոնք չէին կարող հատուկ լինել տվյալ հեղինակի բարբառային արտասանությանը՝ բանդ, վտանկ (Դրասխ.):

Թեև 10-րդ դարում հիմնականում պահպանվել է գրաբարի հնչյունական համակարգն իր բնորոշ գծերով, այնուամենայնիվ մատենագրությունը բազմաթիվ փոփոխություններ է արձանագրել:

Հնչյունական փոփոխությունների որոշ մասը գալիս է հինհայերենյան շրջանից, բնորոշ է եղել նաև հին հայերենի տարածքային ճյուղավորումներին, բայց դրանց վերաբերյալ առաջին

¹¹ Տե՛ս Գ. Զաճուկյան, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Եր., 1997, էջ 10:

վկայությունները գտնում ենք 10-րդ դարի մատենագրության մեջ: Չնայած գրաբարյան ուղղագրությունը պահպանելու ձգտմանը՝ խոսակցական լեզվի տարրերը ներթափանցել են գրական լեզու և արձանագրել դասական գրաբարին ոչ հատուկ ձևեր: Երբեմն գրական և բարբառային ձևերը նույն հեղինակի լեզվում հանդես են եկել զուգահեռաբար: Քանի որ ձեռագրերը մեզ են հասել ընդօրինակումների միջոցով, ապա շատ հնարավոր է, որ դրանցում տեղ գտած լինեն նաև ընդօրինակողների լեզվական առանձնահատկությունները:

Համառոտագրություններ

Անան. - Անանուն, Պատմութիւն Անանուան, Եր., 1985:

Դրասիւ. - Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ, Պատմութիւն Հայոց, Եր., 1996:

Արծր. - Թովմա Արծրունի, Պատմութիւն Յանն Արծրունեաց, Եր., 1985:

Մեսր. - Մեսրոպ Վաղնձորցի, Պատմութիւն Հայոց, Մաղրաս, 1775:

Ռիկտ. - Ռիկտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայրապետաց և րափառաց Հայոց, Վաղարշապատ, 1871:

Ш. Р. ГУКАСЯН - *Особенности звуковой системы в историографических трудах X века.* - Язык историографии X века отмечен значительным изменением звуковой системы. Часть этих изменений зафиксирована в трудах всех изучаемых авторов, а другая часть, связанная с диалектной принадлежностью, свойственна лишь некоторым авторам.

Летописные данные свидетельствуют о том, что уже в X веке дифтонг «шъ» в закрытом слоге превратился в «о», а грубое [η] в заднеязычное η. Эти изменения зафиксированы в трудах всех историков X века.

Параллельно традиционным видам звуковых чередований дифтонгов и простых гласных в произведениях некоторых авторов находим звуковые чередования, несвойственные классическому грабару. Так, по Ованесу Драсханакертци, ш>т, ш>ш, п>п, ր>ռ, по Ухтанесу - ш>ը, п>ռ, а в произведениях Амануана и Товма Арцруни - ш>т, ш>т, ш>т, п>ռ, ր>ռ, յ>յ, յ>յ. Последнее звуковое чередование (յ>յ), наверняка, является следствием влияния разговорной речи переписчика. Некоторые изменения претерпели и другие согласные грабара. Определенная часть звуковых чередований восходит к древнеармянскому периоду и характерна для территориальных разветвлений древнеармянского языка. Но первые сведения, относящиеся к звуковым чередованиям, находим в летописях X века. Несмотря на стремление защитить правописание грабара, элементы разговорной речи проникли в литературную речь и зафиксировались в ней как анды, нехарактерные для классического грабара.